Ահմադ Դեհղան «Լորը»

Սա մի տխուր պատմություն է Իրան-Իրաքյան պատերազմի վերաբերյալ:Հեղինակը պատմում է նրա մասին,որ երկու ընկեր՝Առաջին ընկերը (անունը չի նշվում հեղինակի կողմից) և Նասերը միայնակ պահում էին դիրքերը և հանկարծակի մի հեռախոսազանգ են ստանում,որտեղ ասվում է,որ՝մի զինվոր է գալիս իրենց մոտ և նրանք սպասեն այդ տղային:Տղայի անունը՝Ալլահղոուլի էր:Որից հետո նրանք ընկերանում են և պարզվում է,որ Ալլահղոուլին ունի մի նշանած,որին ամեն երեկո նամակ է ուղարկում:Եվ ահա սկսվում է պատերազմը,տղաները գնում են կռվի դաշտ:Եվ երբ պատերազմը ավարտվում է տղան գալիս է խրամատ և սպասում իր ընկերներին՝Նասերին և Ալլահղոուլիին:Նասերը արնաշաղախ և վնասված ոտքով մի կերպ գալիս է խրամատ,և նրանք միասին սպասում են Ալլահղոուլին,բայց Ալլահղոուլին չի գալիս:Եվ երբ պատերզամը ավարտվում է հեռախոսազանգ է գալիս իրենց հրամանատարից և հրամանատարն ասում է,որ նրանք բանակցել են հակառակորդի հրամանատարների հետ և պատրասվում են դիակներով փոխանակվել:Տղաները գիտեին թե որտեղ էր Ալլահղոուլին:Եվ երբ հասան կռվի դաշտ տեսան Ալլահղոուլիի դիակը ամբողջովին պատված լորերով:Եվ շատ լավ էր,որ պատերազմը ավարտվեց թե չէ տղաները պետք է ամեն օր նամակ գրեին Ալլահղոուլիի սիրելիին ստելով,որ նրանց ընկերը ողջ է:

Պարույր Սևակ «Անլռելի Զանգակատուն»

Պոեմի կառուցվածքի երաժշտական բնույթը պայմանավորված է գլխավոր հերոսի՝Կոմիտասի ստեղծագործական նկարագրով, որի կյանքը հայրենի երգի միջով ճանապարհ է դեպի ժողովուրդը և ժողովրդի ցավի միջով՝դեպի խելագարություն ու ողբերգություն:Կոմիտասի կերպարը Սևակի համար ոչ միայն նպատակ էր, այլև միջոց՝մեկնելու, ինչպես ինքն էր ասում, հայոց՝չհասկացված բախտի հմայքը:Հայրենի երգի մեջ ժողովրդի ամբողջ պատմությունն էր՝ցավի և ուրախության թրթիռներով:Ժողովրդի պատմության ու բնաշխարհի այս մթնոլորտում էլ ձևավորվում է Կոմիտասի կերպարը: Պոեմում ոչ մի անգամ չի լսվում Կոմիտասի ձայնը:Նրա խոսքի փոխարինում է ժողովրդական երգը: Կոմիտասը դառնում է երգ և կա այնքանով որքանով կա երգը: Ընթերցելով այս ժողովածուի նյութերը ՝մենք չենք կարող չզգալ ու չհասկանալ,որ Կոմիտասը մի «հերթական» դեմք չէր հայ մշակույթի պատմության մեջ:Հայ մշակույթի պատմության մեջ նա չի զբաղեցնի միայն մի դրվագ:Նա միայն երգահան չէր:Նա մեծ գիտնական էր,նաև հայ երգի լավագույն կատարողը ՝նույնպես սկզբնավորող և ոչ թե շարունակող:Կոմիտասից առաջ էլ կար հայ երգ ու նվագ,հայը ուներ իր երգային համակարգը և երաժշտական գրականությունը,բայց այդ համակարգը տարբերելու և համադրելու,այդ քերականությունը ուսումնասիրելու համար հարկավոր էր հանճար լինել:Այս վերապահմամբ էլ՝Կոմիտասն էր,որ հայերին հայոց երգ ու նվագ տվեց:Ըստ իր գործի և դրա հետևանքների՝նրան հայր կարող էր դառնալ միմիայն Մաշտոցը:Կոմիտասը ճամփորդ է,ով եկել է դարերից ու դեպի դարերն է գնում: